Արձանագրություն N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար պատճենահանող և բազմաֆունկցիոնալ սարքերի վերանորոգման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«28» նոյեմբերի 2016թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատակ դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

հանձնաժողովի քարտուղար՝

Դավիթ Թովմասյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-06» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտի բացման մասին.

Հայտը բացվել է www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի նոյեմբերի 28-ին, ժամը 12:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գինը /ՀՀ դրամ/
1.	Պատճենահանող և բազմաֆունկցիոնալ սարքերի վերանորոգում, ներառյալ պահեստամասերը /ծառայության մատուցումը՝ Երևան քաղաքում/	727 130

3. Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը (անունը)	Հասցեն, հեռախոսահամարը
«ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ» ԱՁ	Արարատի մարզ, գ. Ոստան Թեիլերյան 14, հեռ. (043) 600090

4. Համակարգում 17.11.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտ չեն ներկայացրել:

5. Տվյալներ՝ բացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.
«ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Տվյալներ՝ մասնակիցների ներկայացրած հայտերի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
«ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան. վերջինս գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Մասնակցի առաջարկած գինը՝

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գումարը
1	«ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ» ԱՁ	631 000	69 000	700 000	-	700 000

8. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.
Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.
1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ» ԱՁ -ին:

9. Հանձնաժողովի քարտուղարին.
Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը
1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմի. ներկայացնել համապատասխան հարցումը,
2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. դեկտեմբերի 02-ը ներառյալ ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016թ. դեկտեմբերի 06-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կարեն Մելքոնյան

Անդամներ՝ Կարեն Համբարձումյան

Սարգիս Արմենակյան

Արթուր Թամրազյան

Խորեն Պետրոսյան

Քարտուղար՝ Դավիթ Թովմասյան